

ՊԱՅՄԱՆՔ

Պարտական գինն է. Պարտք համար 180 դր.
Պարտք համար 40 դր.
Պարտք համար 90 դր.
Պարտք համար 30 դր.
Պարտք համար 10 դր.
Պարտք համար 5 դր.
Պարտք համար 2 դր.
Պարտք համար 1 դր.



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔՈՒԹՅՈՒՆ Յ ՓԵՏՐՈՎ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գերմանական խորհրդարանը փե-
տքաբար է ին (բառ նոր տառադրե-
րացուցաւ: Ինչպէս կայարը միշտ հի-
ւանդ ըլլալով՝ չկրցաւ այս հանգիստին
ներկայ գտնուիլ: Կայսերական ճա-
ռը Պ. Տը Պիտերը կարգաց: Ճա-
ռը կ'սկսի յայտարարելով թէ Գեր-
մանիոյ կայսրը հիւանդութենէ ստիպ-
եալ չկրցաւ խորհրդարանն անձամբ
բանալ: Յետոյ կը ծանուցանէ թէ
համայն Գերմանիոյ համար միակերպ
օրինադրութիւն մը հաստատելու գործը
բարեբաղդաբար ի գլուխ կ'ըլ-
լայ կը յաւելու թէ պէտք է նաեւ
ներկայ գտնուին օրէնքներն ալ մի-
ակերպ դրուածն մը վերածել: Ա-
հա այս պիտի ըլլայ խորհրդարա-
նին առաջին կարգին մէջ փնտրու-
նալ թէ ինչպէս պիտի ըլլայ խորհրդար-
անի օրէնքներն ալ հաւասար դրու-
ածն մը պիտի վերածին:

Վերջապէս կայսերական ճառը
կը յարէ:
«Օտար անհոգութեանց հետ մեր
հաւանքած յարաբերութիւնները վը-
րահուած թիւն կուտան մեզ թէ ա-
ռան կառավարութիւնը մտադիր են
եւ կը ջանան խաղաղութիւնը պահ-
պանել՝ առանց կուսակցութեանց
«գործութիւններուն ակնյալ տարու-
մելիւն մեծագոր վեհապետաց հետ
«կայսեր ըրած տեսակցութիւնը հա-
ւատարմութեամբ անվերջապէս
«թէ խաղաղութիւնն անվերջապէս
«տի մնայ»»

Այս յայտարարութիւններն, ինչ-
պէս կը տեսնուի, բոլորովին ազա-
հալի են:
Հունգարիոյ նախարարաց նոր փո-
փոխութիւն մը հաւանական կը թուի:
Այս փոփոխութեան պատճառն է
նախ՝ անշարժ կառավարող վրայ տար-
ք սահմանելու համար խորհրդարանին
մէջ նախարարաց կրած պարտութիւ-
նն, եւ երկրորդ՝ երկաթուղեաց ըն-
կերութեան մը հետ կնքուած գաշ-
նադրութեամբ մը նախարարաց ըն-
դունած ծանր պայմանները: Անշարժ
կառավարող տարբեր նախարարաց կող-
մանէ երեսուն միլիոն ֆիորին տա-
լարիւմէ էր, բայց այս տառադր-
ութիւնը պարտաւորող յօդուածը
մեծագոյն մասամբ մերժուեցաւ: Բա-

յոր ջախարհամեանք կառավարու-
թեան ծրագրին դէմ քուէ տուին:
Բայց այս կուսակցութիւնն առանձին
չէր կրնար մեծամասնութիւն վաստը-
կիլ՝ եթէ ուրիշ կուսակցութիւններ
ալ իրենց չ'յարէին: Ասանք թէ պէտ
եւ առժամանակեայ կերպիւ միացան,
սակայն չպիտի յաջողին համամիտ
եւ տեւիտեան նախարարութիւն մը կազ-
մել: Առ այժմ հունգարիոյ նախա-
րարը իրենց իշխանութիւնն ու ազ-
դեցութիւնը տկարացած կը տեսնեն:
Բայց իրենց յաջողութենէն ալ չ'պիտի
կրնան երկար ժամանակ պաշտօնի
վրայ մնալ, եւ հոսի ուրեմն հարկ
պիտի ըլլայ խորհրդարանը լուծել
եւ նոր ընտրութիւններ ընել տալ:

Անգլիական խորհրդարանին ընդ-
հանուր ընտրութիւնները վերջացան,
բայց ազատական կամ Ուիլ կուսակ-
ցութիւնը՝ Թորի կամ պահպանողա-
կան մասին յաղթուեցաւ: Այս վեր-
ջիններն եւս փնտրուեցաւ եւ մէկ ընտրու-
թիւն առաջին փոփոխեցան: Հետեւ
բար Քրիստիանական ազգն զՊ. Կլարք-
թըն եւ իւր քաղաքականութիւնը կը
մերժէ, եւ թագուհին կը պարտաւո-
րի Թորի կառավարութիւն մը կազ-
մել, որոյ գլուխ պիտի ըլլայ Պ. Տի-
րայթը: Պահպանողական մասը բա-
ւական տարիներէ ի վեր իշխանու-
թեան հետացած էր, բայց կառավա-
րութեան երեսունները նորէն ձեռք
առած ժամանակ թէպէտ եւ երկուս-
կան նկատմամբ բարեալաճ փնտր-
մը պիտի գտնէ, բայց ըստ լրագրաց
ոմանց՝ Անգլիոյ նախկին քաղաքական
համարումն ալ բաւական նուազած
պիտի գտնէ: Պ. Տիւրայթը եւ իւր բա-
րեկամները չեն կրնար այն համարու-
մըն անմիջապէս վերադարձնել: Այ-
սու ամենայնիւ զԱնգլիա իւր առանձ-
նութեան գիրքէն հանելով, օտար
տէրութեանց գաշնակցութիւնը պի-
տի կրնան մշակել: Պահպանողականը
ներկայ նախարարաց քաղաքականա-
պէս առանձնութիւնն ու տկարու-
թիւնը կը մեղադրէին, որով Գաղղիա
բողոքովին բարձի թողի ըրին, եւ էւ-
րոպական հաւատարմութեան փո-
փոխմանն անտարբեր հանդիսատես
եղան: Այս քննադատութիւնները
ներկայ ընտրութեանց առթիւ պահ-
պանողական մասին մեծամասնու-
թիւն վաստկեցելու պատճառ եղան:

Սպանիոյ կառավարութիւնն օտար
տէրութեանց ծանուցադրել մը զըր-
կեց Մարտիոյ մէջ կատարուած նա-
խարարական վերջին բուռն փոփո-
խութեան պատճառը բացատրելու
համար: Այս ծանուցադրելը կիմար-
նէ թէ 1869 ի սահմանադրութիւնը
պիտի պահուի, բայց ի մէջէն թա-
ղաւորին վերաբերեալ յօդուածէն,
որ անոր հրաժարմամբ չ'ընջը-
ւած է: Միանգամայն ներկայ կա-
ռավարութիւնը կը թէ խորհրդա-

րանին միջամտութենէն ազատելով
ներքին քաղաքային պատերազմը պի-
տի վերջացնէ եւ առավարները պի-
տի պատժէ: Երբ որ ապագամբու-
թիւններն եւ խառնակութիւններ
վերան, այն տուն Սպանիական
ազգն իր կամքն ազատօրէն պիտի
կրնայ յայտնել երեսփոխանական
ժողովոյ միջոցաւ: Առ այժմ քաղա-
քային պատերազմն ընդարձակելու
վրայ է: Տոն—Գարրաի կուսակցնե-
րն ամեն օր յաղթանակներ կը տա-
նին: Արդէն մինչեւ Սանթամեր հա-
սան: Յիշեալ քաղաքն ամբողջութե-
նով, մինչեւ Տոն—Գարրաի կուսա-
կցը գլուխ թափելու մը կը կազմէին:
Կարթագենէի պաշարման ժամանակ
բաւական մեծ ծառայութիւններ ը-
նող Գանթու զօրապետը հրաժարա-
կան տուաւ:

Հոլանտայի մայրաքաղաքէն առ-
նուած հեռագրաւորները կը ծանու-
ցանէն թէ Ալինի Սուլթանը վախ-
ճաներ է, բայց հոլանտացոյ Ալի-
նի վրայ բացած պատերազմը չէ վեր-
ջացած տակաւին: Թէպէտ հոլան-
տացիք Ալինի Գրաթման անուն բեր-
դը գրաւեցին, եւ Ալինի Սուլթանը՝
Ալաւաթին Մահմադ Դաւա՝ մեռաւ,
բայց Ալինիք՝ որ եռանդալից իշամ-
ներ են, երբէք չեն վճարիր, եւ
հաստատութեամբ օրաշաճ են հո-
լանտացոյ դէմ պատերազմը սաստ-
կութեամբ յաւաք տանելով՝ զանա-
վանել եւ իրենց երկիրը պաշտպանելու
իւր անկախութեան եւ հայրենեաց
համար ոյշալով անձնաւորաբար պա-
տերազմող ժողովուրդը մը դիւրու-
թեամբ գէնքը վար զգնեն եւ թըշ-
նամայն անձնատուր ըլլար: Հոլան-
տացիք նորահնար զինուոր կազմանէ
առաւելութիւն ունին, բայց իրենց
զինավորումն ալ այնպիսի թշնամի մ'
է, որ մինչեւ որ իսպառ չ'յաղթուի,
պատերազմէն ետ չ'պիտի քաշուի,
ուստի սոսկալի տրեւն հեղութիւն մը
կ'ապաստուի Ալինի մէջ, որ թերեւս
հոլանտացիներն անցեալ դարնան պէս
եւս գաւառաւոր ստիպէ:

Պարսկական կառավարութիւնը Պ.
Ռիթմէրի տուած արտօնադրելը չ'ըն-
ջեց, արտօնադրել մը՝ որ հրաշալիք
կը խոստանար ստացողին: Բանդի ոչ
միայն երկաթուղիներ չ'ինելու՝ այլ
եւ հանքերն ու անտառները բանե-
ցնելու եւ ուրիշ շատ մը բաներու ի-
րաւունք պիտի ունենար: Կրտսի
թէ Պ. Ռիթմէր բողոքած է. բայց
ոչ Անգլիա, ոչ ալ Գերմանիա (Պ.
Ռիթմէր Անգլիոյ հպատակութիւն
ընդունած Գերմանացի մ'է)՝ պաշտ-
պանութիւն չ'են ըրեր իրեն: Այս
տէրութիւններն արտօնադրին հրա-
տարակուած ժամանակ՝ անոր պա-
րունակած չափազանց պայմաններ
տեսնելով՝ կարեւորութիւն տուած

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց հան ու
«այլքը յամազրուի եւս վրա»
Լրագրաց վերաբերեալ հասա-
կամ որ եւ իցէ գրութիւն յամազրու
—Տնօրէնին պիտի ուղարկուի Պ.Օ.
Իս, Չինիլի խան, Մասիսի գրաւուն-
եակը:
Համար ծախքը չ'զեւարուած է
մակ չ'ընդունուիր:

չէին, եւ արդէն յայտարարութիւն ալ
ըրած էին թէ երբէք միջամտութիւն
չպիտի ընեն:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուրս 9 փետր.
Կատարուած ընտրութեանց թիւն է
509, որոյ մէջ պահպանողականը շահած
են 267, եւ ազատականը 242: Պահպա-
նողականը 75 ամբողջ տարի ազատական-
ներէն, ազատականը ալ 27, հետեւաբար
պահպանողականը 43 ամբողջ շահած են:
Պ. Կլարքթընի հրաժարման լուրը
կանխահաւ կ'ը:

Յունիստ ամսոյ մէջ դուրս տարուած
վաճառքներուն գումարն է 19 1/2 միլի-
ոն, եւ ներս բերուածներունը 51 1/4:

Փարիզ 10 փետր.
Մարթինիքի երեսփոխան Պ. Պրոքուր
հասարակաց դործակից՝ դռնուերու
ամբատանութեան երկարութեամբ, ձե-
նապ գնաց, որպէս զի ձեռք չ'ունէին:

Գարթմանէն Գաղղիա ապառաւանալ
փախտեալք ազատ թող տրուեցան: Բայ
անոնցմէ՝ որը հասարակ յանցանքներ
դործած են: Այս վերջիններն Սպանիոյ
իշխանութեանց պիտի յանձնուին:

Գաղղիոյ պատմութեան եւ նոյն նա-
նուր դործող հեղինակ անուանի Պ. Միշ-
լէ փիլիսոփայ պատմաբան ընտրու 76
տարուան հասակի մէջ:

Ստալդ փաշան այս առաւօտ Լուրս
գնաց:
Սուեթական թուղթերու վրայ տը-
րոց յաւելուածն աղգային ժողովն ըն-
դունուեցաւ:

Պէրլին 10 փետր.
Արարակելի փոթորիկ մ'ընելով, Քիւլ
եւ Սուիսկուէտա քաղաքները մասամբ
մ'այս գիշեր ծովուն մակընթացութենէ
ողողեցան:

Վիեննա 11 փետր.
Կայսրն այս առաւօտ ճանապ ելաւ
ի Բեռլին:

Վիեննա 10 փետր.
Գործերը խիստ սահմանաւոր են Պոր-
տոյն մէջ եւ արժեթուղթերն իջնելու հա-
կամաւ: Ժախելու առաւելութիւնները
շատ են:

Պ. Բրախտ սեղանաւորը Յտարի բան-
տարիութեան դատաւարուեցաւ:

Վիսնայ 11 փետր.
Խօսք կայ թէ Մաքս—Մահլան մարա-
շախ մօտերս ճանապարհորդութիւն մը
պիտի ընէ գաւառաց մէջ:

Գաշիլէ 10 փետր.
Խոթիլին զօրքերը մեծ յաղթութիւն
մըրին Տարֆուրի մէջ: Զաղաքը դրուեցին
Թշնամիք իրենց հրամաւորը կորսնցնելով
ի փախուած դարձան եւ կը հալածուին:

Վիեննա 11 փետր.
Ստալդ փաշայի պաշտօնին վրայ բնու-
ւոր մը դուրս չ'ելաւ:

Վիեննա 14 փետր.
Հոս ապառաւանալ Պրոքուրներն ա-
ռանց պայմանի Ոսմանեան կառավարու-
թեան հնազանդելով իրենց երկիրը պի-
տի դառնան:
Հունգարական փոխառութեան բա-
ժիններուն փնտրանքները կատար-

